

նոցա դիրքը տեսնելու և տեղագրութիւն
անելու կպակասի մեջ միջոց։

Ա.Բ. Ա.Ր. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՅՍՏԱԿ ԴԱԿԱՄԱ

Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ. Ա.Վ.

ԵՒՍ ԳԱԼԻՒԹ ՆԵՐ ԳՈՎԵԼԵԼ ԿՈԹ ԽՈՎԵԿՈՍՓ.

(Անդեւ Բառեն հայոցու)

Ա երն (Երարատայ անցեալ Ռ. բդ
թուում) սասցի թէ, եթէ **Վ ուկասը չէր**
մեր երեւելի Ամթուղիկոսներէն մինը, չէր
զոնէ և վերջինն, և էս ապացուցանելոյ
համար փոքր ինչ շեղուինք մեր նպատաւ
կէն և հրաւերենք մեր ընթերցողները
դարձնել իւրեանց ուշադրութիւնն էն
ժամանակուան դրացի իշխողների քաղաւ
քական փոփոխութիւնների վերայ։ Ու ինչ
ժամանակ քանի մի դարուց հետէ Պարսկա
կաստունը չէր եղած էնպէս երերուած և
տատանուած վիճակի մէջ՝ ինչպէս էր
Վ ուկասի ժամանակն։ Խրագոնչեւը
Պարսկաստանի կուսակալ կոմ խան գուն
կործէր գրաւել միահեծան թագաւորու
թիւը, ուստի և միմեանց վերոյ յարձաւ
կուելէն ոտնակոս կլինէր բոլոր նրանց աշ
խարհն և աւելի ևս Հայաստանի կողմերն։
Վ ուկասն ստիպեալ էր իւրաքանչեւը
յարձակողի երեսը մեծամեծ ընծաներով
հաշտեցնել։ Խվերջոյ երբ կլսէ ներքինի Եզ
զա Մամատ խանի հզօրանալը միւսների
վերայ, և թէ նա մտադիր է բազմաթիւ
զօրքով չուել գոլ Հայաստանի կողմերն,
1794 ամին քսան բեռն Պայազիտ՝ և **21**
սնտուկ Խիվլիս կառաքէ, պարունակուած
աթոռային թանկազին և ականակուա
թագելէ, վականերէ, գաւազաններէ, եւ

կեղեցական սպասներէ, անօթներէ և
զգեսաներէ, կարծելով թէ էն քաղաքներն
անքսյթ կմնան և անվանոգ։ **Տարարախաւ**
տութեամբ՝ **1795** ամի **11** սեպտեմբերի
թիվլիս կաւերուի Եզա Մամատ խանէ,
այն տեղի Պետրոս Խպիսկոպոս առաջնորդը
կդերուի և կյափշտակուին աւարառուներէ
21 սնտուկ աթոռային կայքը։

Վ ուկաս մեծամեծ ընծաներով ինքը
կերթայ ներքինոյ եղբօր որդի Սուլեյման
խան Արդգարի, և զՅովհաննէս Խպիսկու
պոս նոյնպէս ընծաներով կառաքէ Շահի
բանակը, նոցա երեսը հաշտեցնելոյ համար։
Մի և նոյն ժամանակը քանի քանի Հայ
և **Վ րացի Վ րաստանէն** բերած գերիներ
կաղաքէ նա աթոռային դրամալ և ի վերայ
այսր ամենայինի՝ Խախիջեանի, Երեանի և
սուրբ Խջմիածնի կողմերն անզգալի վնաս
ներ կրելով՝ կաղատուին խոհեմութեամբ
Վ ուկասի, թէ և ինքն բանակի մէջին սաս
տիկ տառապանքներ կրկէ։ Եյնուհեան՝
այս ինքն 1796 ամին շրջարերականներ կա
ռաքէ Տաճկստանի Առուսաստանի Պարս
կաստանի և Հնդկաստանի ազգայնոց վե
րայ, երկար երկար նկարագրելով իւր վրշ
տակրութիւնները, աթոռային և ազգային
տիսուր վիճակը, ամենուրեքէ մեծամեծ
անտկնկալ ծախքերը, գանձարանի թափու
րանան, և կը իննդրէ օգնել Աթոռին արշ
դիւնաւոր նուերներով։ Եմենայն ուրեք
նրա շրջարերականները համակրութեամբ
կընդունուին և մեծամեծ գումարներ կա
ռաքուին ամենուրեքէ շարունակ Խջմիա
ծնի ցՎ ուկասի իինաց վերջին օրերը, էն
պէս որ՝ նրա մահուան ժամանակը գան
ձարանի մէջը հարիւր հաղար նուհան
Պարսկաց պատրաստի դրամ կդանուի, զոր

Դաւիթ կյափշտակէ և շոայլութեամբ կծախէ մեծամեծների զրանը իւր Աստուղիկոսութեան համար՝ ինչպէս կհաստատուին գրաւոր փաստերէ:

Ապաքէն անհիմնէ հեղինակի ասածըթէ Պառկասը սաստիկ կիսոշտանգուի Եջմիածնի միաբաներէն և կաքսորուի: Ասակայն ձեռնտուութեամբ Արաց Հերակլ կայսեր (այս ևս նոր ախտղոս) կազտի և գաղտագնաց կփախչի ի Տիֆիսո և անտի Եւրոպաւու, Պառկասն երբէք Թիֆլիս չե եղած, ինչպէս էլ Եւրոպա, և ուր արդեօք նա աքսորուեցաւ և Երբ, ափսոս հեղինակը չի յիշեր: Արդէն երեւեցաւ Եփրեմ Ասթուղիկոսի Առնդակէն որ՝ Երբսէն և Պառկասն տասն և միտարի Եջմիածին են եղած, անմիջապէս վերջնոյս գահակալութեան սկզբներումը, Արմենի մահուանէն յետոյ, և 1794 ամին՝ Վ. Շոռային կայ ըլ Պառկասն ուղարկած է Պայշտիս և Թիֆլիս. իսկ նա կվախճանուի Եջմիածին 1799 ամի Դեկտեմբերի 27 ին և կժաղուի Արդւոց Որոտման տօնի օրը, սուրբ Գրայիանէի վանքումը, ասել է կինի 17 տարի նրա Եջմիածին մալն. կմնայ երեք տարին, որպէս զի նրա քսան տարի Կաթուղիկոսութեան միջոցն լրանայ, ուրիշն ե՞րբ արդեօք նա աքսորուեցաւ և փախաւ Եւրոպա, եթէ մշջ չքերենք Պօլիսէն կամ հեռի միւս քաղաքներէն մինչ սուրբ Եջմիածին գալոյ ընտրութեան ըւրը:

Ի վերջոյ, եթէ նա հոռվմէական հակումն էր ունեցած, անշուշտ Հայր Ա. Զամշւանը չեր լուր, որ կյիշէ զՊառկաս և կըհասցնէ իւր պատմութիւնն ց1784 ամին: Հայր Ա. Վարդապետ Մուրատեանը

կաւելցնէ՝ ձեռնառուութեամբ Հերակլ աբքայի կազատուի . . . և այն: Բնդհաւ կառակիր՝ Հերուկիը միշտ կարօտէ եղած Պառկասին, ինչպէս կվկայեն նրա յաճախ թղթակցութիւնները Պառկասի վերայ ձեռամբ Թիֆլիսեցի գրագիր և խորհրդական նոյն աբքայի Տէր Պետրոսիան Տէր Պետրոս քահանայի, որոց մշջին կը խնդրէ նրանէ Պարսից երեւելի իշխանների, պաշտօնատարների մօտը (որոնք շարունակ Երեւանի վրայով, Տաճկաստանի կամ Պարաստանի և նոյն իսկ Հայաստանի վերայ կը յարձակուեին) վասն ինքեան միջնորդէ, բարեխօսէ, պահպանէ իւր քաղաքականութեան կշեռլ նոցա մօտ, հազորդէ ինքեան նրանց զօրաժողով լինելը, որքան զօրքով և ուր նոցա յարձակուիլը, որի յաղթուիլն և յաղթուիլն և այն ևլն: Պառկաս Կաթուղիկոսն իւր քսան աւմեայ գահակալութեան շրջանն՝ առանց բացակայութեան Եթոռէն՝ աչալըջութեամբ, խորագիտութեամբ կկատարէ, և որպէս Պարսից՝ նոյնպէս Տաճկաստանի զօրավարների և Արաց աբքայի հետ իւր գրաւոր յարաբերութիւնները կը շարունակէ առանց վհատանաց և լքման իւր պաշտօնի մեջն, ինչպէս կերեւին նրա և այլոց թղթակցութիւններէ:

Ընցնինք ուրիշ մի կէտի: Յովսէփ Արշութեանը կը վախճանի Թիֆլիս 11 մարտի 1801 ամին, և Դաւիթ Ենադէս գեղացին (Լոռեցի) կօծուի Եջմիածին, ինչպէս և Դանիէլն ևս փոքր ինչ յետոյ՝ այսինքն 1802 ամին (կարծեմ Սպրիլին) Եփրատ գետի վերայ Բագրեանդ գաւառուի սուրբ Յօհաննու Մկրտչ անուան նութիրեալ վանքի մեջ, ուր մկրտուեցաւ Տրդատ թագաւորն իւ-

սուրբ Լուսաւորչէն, ուստից տասն կամ տասն և հինգ աւուրց յետոյ՝ կերթայ Պայշտիտ։ Թակադ ըռութեամբ Պաւթի՛ Երեանի խանը կպահանջէ Պայշտիտի փաշայէն զՊանիէն և կալանաւորեալ տանել կայ Երեանի բերթի մեջը կբանտարկէ մինչեւ Գամբ-Ելի շահի գալուստն յԵրեան, սորա հրամանաւ¹⁾ կաքսորուի Թաւրէղ²⁾ և անտի Մարաղայ³⁾, ուր կմնայ յ1808 ամի սկիզբներն, երբ կազատուի և կվերադառնայ ի սուրբ Խջմիածին ինչպէս օրինաւոր կաթուղիկոս վարել զիւր իշխանութիւնը, բայց քանի մի ամիս կենալէն յետոյ՝ անդէն կվախճանի։

Սորա ապացուցութիւններն են Պանիէլ շնորհակալութեաննամակն առ ինքնակալ կայսրն Ոռուսաց՝ որ վասն ազատութեան իւրոյ՝ գրուած 1808 ամի (ափսոս պատճենի վերայ ամսաթիւն չէ նշանակուած), կոնդակն առ Կապալէօնառաջիւնըն՝ գրուած նոյն ամի յուլիսի 16ին ժամն

(1) Պամֆ-Ալի շահն ունէր երկար, թաւ և լայն մօրուս ինչպէս և Պաւթին, ուստի Շահը տեսնելով նրա չքեղ գեմքը՝ կասէ էսպէս փառաւոր մօրուսով անձն չէ կարող սոսորադրուիլ Պանիէլի նման զառամեալ, ծերուկ և փոքրամօրուս մարդի ուստի մերժուի և աքսորուի Մարաղայ նրա հակառակորդն։

(2) Մի և նոյն ժամանակի այս ինքն 1804 ամին բանտարկուած էր և Թօստօմբէկ Մելիք-Ապովեան Մելիք-Բէզմարեան քաջ երիտասարդն Թավլուկ, ուր նահատակուեցաւ իւր հաւատը չուրանալու համար։

(3) Մարաղայէն կան ինչ ինչ նորա կոնդակներ սորա նորա վերայ բայց կմնային առանց ազդեցութեան նրա հակառակորդ Պաւթի թելազութեամբ։

Բատիսթ Բոււաս Պահապանի Խջմիածին գալստեան համար Իսկ ժեներալ Պօրտօնի գալստեան համար 1809 ամի 25 ապրիլի կորէ ժողովն բարձրագոյն խորհրդաւանի Խջմիածինի առ նոյն Կապալէօն⁴⁾, և կսորագրեն նրա անդամքն և կյիշեն Պանիէլի մահն ևս Պուկասի մահուան՝ Պանիէլի և Պաւթի տխուր անցքի պատմութիւնը գրուածէ Պիւմիւշխանցի ականաւես Մանուկէլ Վարդապետէ Ելթունեան, որ դեռ ևս չէ տպուած⁵⁾, և ինչպէս կյիշեմ, էս պատմութեան յառաջաբանութիւնն և մի համառօտ յօդուած 1863 ամի Կռունկ Օրագրի մեջին հրատարակուած էր, ուր էս անցքերի մասին յիշուղութիւններ կլինին։

Համոզուած էմ, որ տակաւին չէ հասած սուրբ Խջմիածինի Միաբանութեան ձեռքը հոյր Մ. Վարդապետ Մուրատեանցի հեղինակութիւնն⁶⁾, տպա թէ ոչ նրա պահաժեշտ և սուրբ պարտաւորութիւնն էր ծշմարտութիւնը պաշտպանել, ժողովելով Մայր Եթոսի գրադարաննեն և Կոնդակնե-

(4) Պատահմամբ միայն էս երեք թղթակցւածիւն երի օրինակներն խառն թխմերիս հետ բերուած են Թավլուկ։

(5) Տպուած է Արմաշու Զարիսափան Ա. Աստուածածնի Վանուց Յու Ամսազրի մեջ։

Ծ. Խ. բ.

(6) Հասած է, և թէ յիշեալ եկեղ պատմութեան ունեցած արժանաւոր և օգտակար պարունակութեանց հետ՝ նա և նշանաւոր և աններկի ոչ միայն (մանաւանդ վերջին դարուց նկատմամբ) պատմական այլ և կրօնական ինչ ինչ պակասութեանց և ոչ սակաւ սիսալանաց համար կարեւոր եղածը իժամանակին կհրատարակուի։

Ծ. Խ. բ.

րի պատճեններէն, եպիսկոպոսների և վարչ-
դապետների ողջունագրերէն աւելի եւ ա-
պացուցութիւններ և հրատարակել իւր
ամսագրի միջոցաւ, և թոյլ չտալ մի ուղա-
զափառ կաթուղիկոսի անունն և համբաւը
յումողէաս հերձուածովութեամբ արա-
տաւորուի, նրա եօթանասուն և երկու
տարի վախճաննելէն յետոյ:

Եղնապէս խոնարհաբար կիսնդրուի վեր-
բապատուելի այր Մ. Մուրատեան վարչ-
դապետէ, որպէս զի նա ինչպէս և ի՞նչ մի-
ջոցաւ հնար է ինքեան, իսկական աղբիւր-
ներէ նորի ինորոյ հաւասարի տեղեկութիւն-
ներ ժողովէ և ուղղէ իւր խոշոր սխալանքն
(աներկմատ եմ, որ եղած է էն ընդդէմ իւր
կամաց), որ պատիւ չի վերաբերիր ոչ իւր
երկասիրութեանն, ոչ սրբոյ Խջմիածնի
Մայր Եթուին և ոչ նորա կաթուղիկո-
սին: Քարե՛, բաւական է որքան հեստեալ
պապական հայերն բարուրանքներ բարդած
են մեր ի՞նչ ի՞նչ կաթուղիկոսների վերայ:

ԴԱԼՈՒՏ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

Է ԹԵՇԵՆ.

**ԵՍՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԸՆԿԻՐՔ+
ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՅԻՈՑ
ՅԵՐՈՒՍԱՂԵՄ+
(Հ-Ե-Ր-ՈՒ-Ն-Ե-Ր-Ե-Մ)**

Լուի ունէր եւ այլ չորս եղբարք, որը մի եւ նոյն
դաստիարակութիւնը ընդունէին. Թագուհին յաջողեց
հաւատացնել իւր որդուց, որ իւրեանց բարեկասու-
թիւնն կախսալ էր իւրեանց միարանութենէն, յոյր
սակա Լուի վարուէր միշտ որպէս մտերիմ բարե-
կամ իւր եղբարց հետ:

Որովհետեւ տէրութեան հզօր իշխաններէն մինն
էր արքայի հօրեղբայր եւ բուլօյնի կոմի Ֆիլիպն,

ուստի սուանակ խուզկարկուք, որը թէիւ հանդարտած,
սակայն նման այն հրոյն՝ որ ծածկուած է մոխրով,
սկսեցին դրդել զնա ի հետեւ բացաբացեցին նմա
թէ որրան ամօթ էր իւր համար կառավարութեան
վարչութիւնը մի կնոջ մեռք թոկով, որ իւրեան
պատկանէր, ըստ որում որդի էր Ֆիլիպ—Օգոստոսի:
(Մոռացանք ասել որ Ֆ. Օգոստոս Լուդովիկոսի
պապն էր): Եւ նա զրգուեալ յայսպիսի ամաստանու-
թեանց՝ միաբանեցաւ յոլով իշխանաց հետ յափշտակել
թագաւորը օրէանէն, ուր գտանիւր յայնժամ Փա-
րէզ վերապանալու ժամանակ: Սակայն թագուհին
եւ արքայն կանխաւ իրազեկ գոլով ազգարարութեամբ
Շամայնի կոմմին, անմիջապէս զեկուցին Փարիզի
բնակչաց, որ սրանալով յօդութիւն իւրեանց վեհա-
պետին՝ բերին ի մայրաքաղաքն յաղթանակաւ: Դա-
ւաճանութիւն խորհուղ իշխանը՝ տեսանելով իւրեանց
զադրած յատակագծի անյաջող ելքն՝ շառագունեցան
եւ բաժանուեցան ի միմեանց պատրաստել մի նոր
ապատամբանիւն, որ պայմենցաւ ի յաջորդ ամի:

Պապն յորդորէր զթագուհին չթազու զիրաւունս հա-
ւատոյ եւ նուաննել զԱլբիժացիս, որը ներձեալ էին
յեկեղեցոյ, ուստի խնամակալունին այնքան տաղնա-
պեցոյ թուլուզի կոմսը (որ զոււի էր Ալբիժացոց):
որ պարտաւորեցաւ վերապանալ ի ծոց Եկեղեցոյ.
ապա թագուհին մի ժողով գումարել տալով ի Փա-
րիզ սահմաննեցին խաղաղութեան դաշինքը. անդ եկե-
ղեցոյ մէջ թուլուզի կոմսն զջաց թոկուն եւ շապ-
կած ի ներկայութեան բոլոր Փարիզու:

Խորվարք մախալով Շամայնի կոմսի վերայ,
պատերազմ հրատարակեցին նորու գէմ՝ պատմանե-
լով թէ վրէժինովիր եմք իւրաւանց Ալբսի դատեր
Հենրիկոս Շամայնի արքային նրուսաղէմայ, որ
յայնժամ ամուսնացեալ էր կիսպոսի թագաւորի հնա: Շամայնի
կոմսն անզօր վննելով ընդդիմանալ իւր
թշնամիաց բազմութեան՝ դիմեց առ թագուհին եւ առ
արքայն, որք զին ի ծեռվին պաշտպաննեցին կոմար եւ
այս կերպի վախճան տուին պայքարին: Թիրօդ պիտի
տար Ալբսին հազար վար տարեկան եկամուտ ու-
նեցող կայուածք, այն թէութեամբ՝ որ վերջինն հրա-
ժարուէ իւր բոլոր պահանջմունքէն Շամայնի կոմ-
սութեան վերայ:

Բայց այս պատմամբութեան հեղինակ Բրըթայնի
կոմսն, որ ալմելարար անձ մի էր՝ ոչինչ չմոռացաւ